Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 25-ի N 125 - Ն որոշման

«Հավելված N 12
ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1467-Ն որոշման

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԸՆԿՈՒԶԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող ընկուզավորների (նուշ, շագանակ, պնդուկ, պիստակ, ընկույզ, գետնընկույզ և այլ ուտելի ընկույզներ՝ բացառությամբ կոկոսյան ընկույզի) բնական կորուստների չափերը, որոնք հետևանք են պահպանման ժամանակ դրանցում պարունակվող ջրի գոլորշիացման:

2. Սույն հավելվածի կիրառության իմաստով բնական կորուստներ չեն համարվում այն կորուստները, որոնք առաջանում են պահման պահանջները խախտելու հետևանքով ապրանքի փչանալու կամ տարայի վնասվելու պատճառով, ինչպես նաև ապրանքի ստացման, կարճաժամկետ պահպանման, վերամշակման և փաթեթավորման հետևանքով առաջացող խոտանը և թափոնները:

3. Սույն հավելվածով սահմանված բնական կորուստների չափերը տարածվում են ընկուզավորների վրա, որոնք գտնվում են տարաներում կամ առանց տարաների պահեստներում կամ բազաներում:

4. Սույն հավելվածով սահմանված բնական կորուստների չափերը կիրառելի չեն, երբ ընկուզավորներն ստացվում և հանձնվում են առանց կշռման:

II. ԸՆԿՈՒԶԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՄՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

5. Ընկուզավորների պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերն են (տոկոսներով քանակության նկատմամբ)՝

Անվանումը	Կորստի չափը (տոկոս)
Ընկուզավորներ (նուշ, շագանակ, պնդուկ, պիստակ, ընկույզ, գետնընկույզ և այլ ուտելի ընկույզներ՝ բացառությամբ կոկոսյան ընկույզի)	0.1

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ